# ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆԻ ԵՐԿԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ

*Գիտնականի 85-ամյակի առթիվ*

***Լրացավ նշանավոր գրականագետ, ՀԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի ծննդյան 85-ամյակը, որ հաճախակի հանդիպող մի հոբելյան չէ, այլ ժամանակակից հայոց գրական դաշտի էական երևույթ, որը թափանցիկորեն արտացոլում է վերջին կեսդարյա մեր գրական-գիտական մտածողության էական զարգացումները:***

Հայ գեղարվեստական գրականությունն ու գիտությունը, մշակույթի տարբեր ասպարեզներ նշանավոր դեմքերով հարստացրած արցախյան հայրենիքը Սերգեյ Սարինյանին օժտել է իր հողի ու բնության շռայլ բարիքներով՝ անդուլ աշխատասիրությամբ, մտքի ու մտածականության բարձր հատկանիշներով, ստեղծագործական ոգեղենությամբ, հայ գրականության ֆենոմենի խորքային գաղտնիքները բացահայտելու հոգևոր ձգտումով, քաղաքացիական հայրենասիրությամբ, որը՝ այսորակ հայրենասիրությունը Սարինյանի դեպքում, գրականության, գրական կյանքի, գրականագիտության հանդեպ բարձր պատասխանատվությունն է, նրա բացառիկ, զտարյուն ու ամբողջական, անշեղ ու անթեք ծառայությունն այս ասպարեզին: Հեշտ չէր, շատ դժվար էր այսպես ապրել ու կողմնորոշվել ժողովրդյան կյանքի դժվարին տասնամյակներում, որոնք ներկա են առ այսօր, շարունակել ծաղկուն պահել ու հարստացնել հոգևոր Հայաստանի դաշտը, որտեղ պարբերաբար ոռնում են խորշակ քամիների պտտահողմերը, շարժվել առաջ՝ երբ քեզ անընդհատ փորձում են ետ քաշել, իրենցով անել ու ամբոխացնել, դիմազրկել՝ ամբոխի չգրված, բայց հզոր սահմանադրության համաձայն:

Սերգեյ Սարինյանը բարդ անհատականություն է, վերջին տասնամյակների մարդկությանն այնքան բնորոշ միայնակ մարդու մի օրինակ հայերիս մեջ: Նա չհարեց որևէ խմբակցության, առաջ կասեինք՝ «կոլխոզի», հետագայում՝ «թայֆայի», եղավ ու մնում է իր հետ, իր հուզաշխարհում ներսուզված: Սակայն մի՞թե միայնակ է: Մեծ հաշվով՝ ո՛չ: Նրա կողքին հայոց նոր ու նորագույն գրականության մեծ դասականներն են, արդի գրականության տաղանդավոր դեմքեր, նա էլ՝ նրանց կողքին: Միասին են: Սարինյանի տունը Մ. Աբեղյա-

նի անվան գրականության ինստիտուտն է, ազգային ակադեմիան, «Գրական թերթը», «Նորքը»: Նրա տունն իր ընտանեկան օջախն է, որտեղ ապրում է իր գեղեցիկ տիկնոջ տրտում հիշատակը և բյուր, անհաշիվ գրքեր, ամսագրեր...

Սարինյանի գիտական հետաքրքրությունները ներփակված չեն մի նեղ ժամանակի ու տարածության մեջ, այլ հարաբերում են 1500-ամյա հայոց գրականության գլխավոր երևույթներին, իսկ վերջին երկու հարյուրամյակների գրականությանը՝ առավել խորությամբ ու էական մանրամասներով: Գրականության պատմաբան նախևառաջ, բայց նաև ոչ երկրորդական տեսաբան ու գրաքննադատ: Այս ասպարեզները միմյանցից խստագույնս բաժանված չեն, այլ մի զգալի չափով ներթափանցված, պատմաբանությունն ուղեկցվում է տեսաբանությամբ ու քննադատական հայացքներով, իսկ վերջիններս իրարով և պատմական հայեցությամբ: Նման զուգորդումները, որ հայոց թե՛ անցյալի և թե՛ ներկա գրականագիտության մեջ հազվադեպ են պատահում, մեծապես բարձրացնում են գիտական շարադրանքի համոզչականությունն ու ճշմարտությունը: Այս մոտեցումը հիմնավորված է նաև նրանով, որ ոչ սովորական, այլ բարձրակարգ գեղարվեստական տեքստը իր ենթատեքստերում ամփոփում է պատմության, տեսության ու քննադատական հայացքի որոշակի շերտեր: Սերգեյ Սարինյանը պատկանում է այն գրականագետների փաղանգին, որոնք անտարբեր չեն հարևան գիտությունների հանդեպ՝ պատմության, սոցիոլոգիայի ու փիլիսոփայության: Սրանք նրա գրականագիտության դաշտում արհեստականորեն ներմուծված երևույթներ չեն, այլ խիստ օրգանական:

Սարինյանի գրականագիտությունը աչքի է ընկնում բացառիկ բազմաժանրությամբ, չկա ասպարեզն արտահայտող որևէ տեսակ, որին նա այս կամ այն չափով դիմած չլինի. գրականության պատմություն, մենագրություն, գրական դիմանկար, քննական ակնարկ, գրքի առաջաբան, բանավիճային հոդված, գրախոսություն, ելույթ, զեկուցում և այլն, որոնցից յուրաքանչյուրով նա ստեղծել է ուշագրավ երկեր: Աբովյան, Նալբանդյան, Պատկանյան, Ռաֆֆի, Պռոշյան, Պարոնյան, Մուրացան, Նար-Դոս, Թումանյան, Շանթ, Իսահակյան, Տերյան, Չարենց, Սևակ և ուրիշ դասականներ, որոնք, նկատենք, ոչ միայն մեծագույն գրական դեմքեր են ինքնին, այլև արտահայտում են ժամանակ և գրական-գեղագիտական հայացքի ուղղություններ, որ շատ կարևոր է Սարինյանի համար: Նա քննում է գրականության պատմության ու տեսության, գրականագիտության մեթոդաբանության հարցեր, ըստ գրականության դասական ուղղությունների՝ համակարգում պատմությունը, ստեղծում հիմնարար աշխատություններ հայկական ռոմանտիզմի և հայոց գաղափարաբանության մասին, անդրադառնում կլասիցիզմի, ռոմանտիզմի, ռեալիզմի, արդիապաշտ գրական ուղղությունների խնդիրներին՝ ցույց տալով գրական մտածողության

զարգացման գլխավոր հանգրվանները: «Հայ նոր գրականության պատմության» (հինգ ստվար հատորներ) խմբագիր և շատ գլուխների հեղինակ, որի համար Սարինյանն արժանանում է Հայաստանի պետական մրցանակի: «Հայ քննադատության պատմություն», «Հայ վեպի պատմություն» ուսումնասիրությունները նույնպես հրապարակ են եկել նրա աշխատասիրությամբ: Այս ամենը մեր գրականագիտական մտքի հարստություններից են:

Անցյալով զբաղվող շատ գրականագետների շարքում Սերգեյ Սարինյանն այն բացառիկներից է, որ իր ստեղծագործական կյանքի բոլոր տասնամյակներում սևեռուն ուշադրությամբ հետևում է ընթացիկ գրական շարժումներին, շատ գրողների ստեղծագործությանը, քննաբանում է, հաստատում, վիճում, երբեմն էլ մերժում՝ հանդես բերելով բարձրակարգ գրաքննադատի հատկանիշներ:

Շատ վաղուց գտնվելով Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում և առ այսօր ղեկավարելով Հայոց նոր գրականության բաժինը, Սարինյանը մեծապես նպաստել է գրականագիտության ակադեմիական մակարդակի բարձրացմանը, ստեղծել դպրոց, կյանքի կոչել բազմաթիվ երիտասարդ գիտնականների: 1994 թվականից, զուգահեռաբար, դասավանդում է «Հրաչյա Աճառյան» համալսարանում և ղեկավարում գրականության ամբիոնը:

Հարգելի՛ Սերգեյ Սարինյան, ձեր ծանրակշիռ վաստակը մեր գրական մշակույթի հարստություններից է՝ արժանի բարձր գնահատության ու պատկառանքի: Ձեզ մաղթում ենք քաջառողջություն և գիտական նոր նվաճումներ:

ՀԳԱԱ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԳՄ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ
«ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ»